Սցենար, մաս 2

Հավերժական ամուսնությանը վերաբերող ինստիտուտի դասից հետո Լուիսն ու Էմման հուշում են ստանում՝ կատարելու որոշ փոփոխություններ և ավելի շատ վստահելու Տիրոջը: Երբ հաջորդ շաբաթ Լուիսը գալիս է ինստիտուտի դասի, նա նստում է Էմմայի կողքին և ներկայանում: Ժամանակի ընթացքում նրանք դառնում են լավ ընկերներ: Նրանք ծրագրում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք թույլ են տալիս միասին ժամանակ անցկացնել և ավելի լավ ծանոթանալ միմյանց: Ժամանակի ընթացքում նրանց մեջ ուժեղ զգացմունքներ են առաջանում միմյանց հանդեպ:

Սակայն Էմման որոշակի մտահոգություններ ունի: Նա ունի այն հատկությունների ցանկը, որ ցանկանում է տեսնել ապագա ամուսնու մեջ: Լուիսն ունի այս հատկությունների մեծ մասը, բայց ոչ բոլորը:

Լուիսը նույնպես սկսում է նյարդայնանալ: Նա սիրում է Էմմային, բայց տեսնելով, թե ինչպես է քայքայվում իր ծնողների ամուսնությունը, վախենում է սխալվել ընտրության հարցում: Նա ուշադիր քննարկում է այն ամենը, ինչ իմացել է Էմմայի մասին՝ իրենց համատեղ զրույցներից և փորձառություններից: Նա զգում է, որ իրենց նպատակները համընկնում են և ցանկանում է խնդրել Էմմային ամուսնանալ իր հետ, բայց դեռ շատ անհայտ գործոններ կան: Լուիսն աղոթում է որևէ նշանի համար, որ Էմմայի հարցում իր ընտրությունը ճիշտ է: Առայժմ ոչինչ տեղի չի ունեցել:

- Անդրադարձեք նախապատրաստական նյութի բաժին 2-ից ձեր սովորածին: Ի՞նչը կարող է օգնել Էմմային այն մոտեցման հարցում, թե նա ինչ է փնտրում հավանական ամուսնու մեջ: Ի՞նչ խնդիրների կարող ենք բախվել, եթե հավանական զուգընկերոջից մեր ակնկալիքները շատ ցածր են կամ շատ բարձր:

- Ի՞նչը կարող է օգնել Լուիսին հասկանալ իր վախերը: Հայտնություն ստանալու մասին ի՞նչը կարող է օգտակար լինել նրա համար: (Կարող եք կրկնել նախապատրաստական նյութի բաժին 3-ը:)

- Ի՞նչ գործողություններ կամ փորձառություններ կարող են օգնել երկու մարդկանց՝ ընկերություն հաստատել և ավելին իմանալ միմյանց հատկությունների, անձի և արժեքների մասին: Որո՞նք են Փրկիչի մեկ կամ երկու հատկությունները, որոնք դուք հույս ունեք զարգացնել՝ պատրաստվելով ամուսնությանը կամ շարունակելով ձեր ամուսնությունը:

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.